ԳԵՈՐԳ ԲՐՈՒՏՅԱՆ

Կյանքի 89-րդ տարում իր մահկանացուն կնքեց փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, փիլիսոփայության միջազգային ակադեմիայի նախագահ, հայոց փիլիսոփայական ակադեմիայի նախագահ, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մետափիլիսոփայության, փոխակերպական տրամաբանության և փաստարկման միջազգային գիտահետազոտական ինստիտուտի նախագահ Գեորգ Աբելի Բրուտյանը:

Գեորգ Բրուտյանը ծնվել է 1926 թ. մարտի 24-ին, Հայաստանի Սևքար գյուղում: 1942 թ. ավարտել է Թբիլիսիի թիվ 81 հայկական դպրոցը, 1948 թ.՝ ԵրՊՀ-ի շինարարական ֆակուլտետը, 1948–1951 թթ. սովորել է Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրայում: 1951 թ. պաշտպանել է թեկնածուական, 1961 թ.՝ դոկտորական ատենախոսություն՝ դառնալով իր մասնագիտության գծով փիլիսոփայության ամենաերիտասարդ դոկտորը Խորհրդային Միությունում: 1951 թ. Գ. Բրուտյանին շնորհվել է դոցենտի, 1963 թ.՝ պրոֆեսորի կոչում: 1971 թ. Գ. Բրուտյանն ընտրվել է Հայաստանի ԳԱ թղթակից անդամ, 1982 թ.՝ ակադեմիկոս: 1977–1994 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ-ի փիլիսոփայության և բանասիրության, 1994–1995 թթ. և 1998–2000 թթ.՝ հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, 1994–2002 թթ.՝ նաև ՀՀ ԳԱԱ-ի փոխնախագահ, 2007 թվականից՝ ՀՀ ԳԱԱ նախագահի խորհրդական, 2011 թվականից՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մետափիլիսոփայության, փոխակերպական տրամաբանության և փաստարկման միջազգային գիտահետազոտական ինստիտուտի նախագահ:

Անուրանալի է Գ. Բրուտյանի ավանդը գիտության և կրթության գործի կազմակերպման բնագավառում: Նա հիմնադրել ու ղեկավարել է մի շարք առաջատար ամբիոններ և գիտական կազմակերպություններ. եղել է Երևանի Բրյուսովի անվան մանկավարժական ինստիտուտի փիլիսոփայության (1962–1970) և Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնների հիմնադիր վարիչը (1970–1986): Մեծ դեր է խաղացել ԵՊՀ փիլիսոփայության և սոցիոլոգիայի ֆակուլտետի ստեղծման ու կայացման գործում:

Չնայած իր տարիքին, Բրուտյանը մինչև կյանքի վերջին օրերը շարունակում էր իր հարուստ փորձն ու կարողությունները ներդնել հայրենական գիտության զարգացման գործում:

Գ. Բրուտյանը հեղինակ է աշխարհի 20 լեզուներով հրատարակված ու թարգմանված շուրջ 70 մենագրությունների, գրքերի ու դասագրքերի, ավելի քան 200 գիտական հոդվածների:

Գ. Բրուտյանը հիմնադիր ու հեղինակ է մի շարք գիտական ուղղությունների և մեթոդաբանական սկզբունքների, որոնք համաշխարհային գիտության մեջ նրա անունով են կոչվում.

– Բազմատրամաբանության հայեցակարգը,

– Փոխակերպական (տրանսֆորմացիոն) տրամաբանությունը,

– Լեզվաբանական լրացչության սկզբունքը,

– Համաշխարհային լայն ճանաչում ունեն փաստարկման տեսության բրուտյանական հայեցակարգը և նրա հիմնադրած փաստարկման երևանյան դպրոցը:

Մեծ է Գ. Բրուտյանի ներդրումը հայ փիլիսոփայական մտքի հիմնահարցերի և հայագիտության մեթոդաբանական սկզբունքների մշակման բնագավառում:

Տարիներ շարունակ ղեկավար պաշտոններ վարելով գիտության և կրթության տարբեր օղակներում՝ ակադեմիկոս Գ. Բրուտյանը ծանրակշիռ ներդրում է ունեցել փիլիսոփայության, տրամաբանության, սոցիոլոգիայի, քաղաքագիտության և հոգեբանության բնագավառներում գիտական նոր հերթափոխի պատրաստման գործում: Շուրջ 30 տարի նախագահել է ԵՊՀ-ում փիլիսոփայության գծով գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդում, իսկ 2011 թվականից ղեկավարել է ՀՊՄՀ-

ում գործող ՀՀ ԲՈՀ-ի 064 փիլիսոփայության և հոգեբանության մասնագիտական խորհուրդը:

Անուրանալի է նաև ակադեմիկոս Բրուտյանի ավանդը համաշխարհային գիտական հանրությանը Արցախի հիմնախնդրի օբյեկտիվ մատուցման և արդարացի լուծման ուղիների ներկայացման, ինչպես նաև Թուրքիայի կողմից հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանության միջազգային ճանաչման խնդրում համաշխարհային ճանաչում ունեցող գիտնականների ներուժի կազմակերպման ասպարեզում:

Գ. Բրուտյանը համաշխարհային գիտական ակադեմիայի ցկյանս անդամ էր (Մեծ Բրիտանիա, 1990), Լոնդոնի դիվանագիտական ակադեմիայի հիմնադիր անդամ (Մեծ Բրիտանիա, 2000), արժանացել է ԽՍՀՄ, Հայաստանի, արտասահմանյան մի շարք երկրների պետական պարգևների, բազմաթիվ առաջատար համալսարանների և միջազգային ինստիտուտների պատվավոր կոչումների ու պարգևների:

Գ. Բրուտյանը ղեկավարել և անդամակցել է մի քանի տասնյակ միջազգային ամսագրերի խմբագրական խորհուրդների, այդ թվում՝ Փենսիլվանիայի համալսարանի (ԱՄՆ) «Philosophy and Rhetoric» գիտական հանդեսին:

Մեծ գիտնականի, մանկավարժի և քաղաքացու անունը ոսկե տառերով է գրվել հայ և համաշխարհային գիտության պատմության մեջ:

Ակադեմիկոս Գեորգ Բրուտյանի հիշատակը վառ կմնա գործընկերների, սաների և նրան ճանաչողների սրտերում:

ՀՀ ԳԱԱ նախագահություն
ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական
գիտությունների բաժանմունք
Խ. Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան